

Իջևան քաղաքում գտնվող Տավուշի մարզային գրադարանը հանդիսանում է մարզի խոշորագույն գրադարանը, ինչպես նաև տեղեկատվության և լուսավորության կարևորագույն կենտրոններից մեկը: Գրադարանում պարբերաբար իրականացվում են տարբեր բնույթի միջոցառումներ՝ փորձելով ներգրավել հնարավորինս շատ ընթերցողների: 2014թ.-ից գրքերը մուտքագրվեցին Ալեֆ ծրագրով, որին այնուհետև փոխարինեց Կոհա էլեկտրոնային համահավաք գրացուցակը: Այս գրացուցակի ներմուծման նպատակն էր ընթերցողին հասանելի դարձնել գրադարանում առկա գրականության ցանկը: 2018թ.-ին Ամերիկյան դեսպանատան աջակցությամբ ստեղծվեց գրադարանի կայքէջը: 2019թ.-ին Ամերիկայի դեսպանատունը Տավուշի մարզային գրադարանին նվիրեց ամերիկյան գրապահարան: Ծրագրի շրջանակներում իրականացվում են անգլերեն լեզվի ուսուցման դասընթացներ՝ ժամանակակից մեթոդներով: Ծրագրի նպատակն է մասնակիցներին ապահովել անհրաժեշտ ծավալով տեսական և գործնական գիտելիքով: <<Սոս մանկական գյուղ>>-ի հետ համագործակցության արդյունքում իրականացվում են նաև ֆրանսերեն դասընթացներ: 2015թ.-ից գործում է <<Հեքիաթի սենյակը>>, որն իրականացնում է տարբեր մանկական միջոցառումներ՝ դրանց միջոցով փորձելով ընթերցասիրություն սերմանել մանուկների հոգիներում:



<https://tavush.reglib.am/>



<https://bit.ly/2pdtPUa>



<https://bit.ly/2omvBSw>



<https://www.instagram.com/gradarantavushimarzayin/>